# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ՀՑԹԻ-ԳՀԱՊՁԲ-20/20

ք. Երևան 09 դեկտեմբերի 2020թ.

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամը, ի դեմս տնօրեն Հ. Մարությանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ըն՝ ի դեմս գլխավոր տնօրեն Ռ.Եսայանի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **5** օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են __5__ օրից ավելի,

2.1.8 Ձննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը ըստ չաձաբաժինների:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **6,260,400.00** (վեց միլիոն երկու հարյուր վաթսուն հազար չորս հարյուր) **ՀՀ դրամ**, ներառյալ 20% ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը գործող ստանդարտների պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից համաձան Հավելված №1: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի ոչ Գնորդի մեղքով առաջացած թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված №3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված №3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս

ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին: 8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է **6** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ | «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ |
| ՀՀ, ք.Երևան, Ծիծեռնակաբերդի խճ. 8/8 | ՀՀ, ք.Երևան 0025, Խանջյան փող.50 |
| «Արարատբանկ» ԲԲԸ | «Թեքեյան բիզնես կենտրոն» |
| Հ/Հ՝ 1510033175435000 | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| ՀՎՀՀ՝ 00007386 | Հ/Հ 1570005003790100 |
| | ՀՎՀՀ 01204713 |
| Տնօրեն՝ Հ. Մարության | Գլխավոր տնօրեն՝ Ա. Եսայան |
| /ստորագրություն/ L.S | /ստորագրություն/ L.S |

*09 դեկտեմբերի 2020 թ. կնքվ*
*«ՀՑԹԻ-ԳՀԱՊՁԲ-20/20» պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Անվանումը | Ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը | Չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | Ընդհանուր գինը/ՀՀ դրամ | Ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | | հասցեն | Ենթակա քանակը | Ժամկետը |
| 1 | 38651200/2 | **Պրոֆեսիոնալ թվային լազերային պրոյեկտոր *Panasonic* PT-VMZ60** | **Panasonic, Panasonic Corp.** (Ճապոնիա) | **Պրոֆեսիոնալ թվային լազերային պրոյեկտոր Panasonic PT-VMZ60/** Professional Digital Laser Projector ***Panasonic* PT-VMZ60**:<br>- **Պատկերի արտացոլման հեղուկ-բյուրեղային տեխնոլոգիա** / 3LCD Technology;<br>- Լույսի **լազերային** աղբյուր / **Laser Light** source;<br>*Հատուկ հնարավորություններ / Special Features:*<br>- **Պատկերների օպտիմալացնում լուսավոր տարածքներում** / Daylight View Basic Optimizes Pictures in Bright Spaces;<br>- **Պատկերի հաղորդում մինչև 150 մետր երկարությամբ մեկ մալուխով DIGITAL LINK տեխնոլոգիայի միջոցով** / 150m Long distance single cable solution with DIGITAL LINK;<br>- **Չսեղմված 4K ազդանշան HDMI- ի կամ DIGITAL LINK- ի մուտքի միջոցով** / Supports uncompressed **4K** signal input via HDMI or DIGITAL LINK;<br>- Տեղադրման հնարավորություններ: առաստաղ / հատակ, առջեւից / հետեւից, 360 աստիճան ազատ տեղադրում / Installation: Ceiling/floor, front/rear, **360 degree free installation**;<br>- **Corner Keystone Correction, Curved Screen Correction** - removes barrel or pincushion distortion for natural projection onto curved surfaces;<br>- **Multi Monitoring & Control Software** հատուկ ծրագրային ապահովում՝ ցանցի միջոցով կառավարել մինչև 2048 սարքավորում համակարգի քարտեզի արտացոլմամբ և չգրանցված սարքերի ավտոմատ որոնմամբ / **Multi Monitoring &** | հատ | 1,935,000.00 | 3,870,000.00 | 2 | ՀՀ, ք.Երևան, Ծիծեռնակաբերդի խճուղի 8/8 | 2 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 45 օրվա ընթացքում |

**Control Software** - manage up to 2,048 devices via network with system map visualization and auto-search of unregistered devices;
- **Convenient Shutter** Function - blocks light output temporarily. It's useful at break-time or whenever you don't require image display, but want the projector powered on, cued up, and ready to go again instantly.
- **Memory Viewer Light Function՝** առանց համակարգչի շնորհանդես անցկացնելու համար՝ թույլ է տալիս ֆայլերի տեսադիտում անմիջապես USB կրիչից / **Memory Viewer Light Function** - insert a USB memory stick containing your media and start projecting straight away;
- Մուտքային ազդանշանի ավտոմատ որոնում/ **Auto Input Signal Search**;
- Գունավոր և սեվ գրատախտակի ռեժիմներ / **Color-Board** and **Blackboard** Modes;
- Հեռակառավարման հեշտ մոնիտորինգ և վերահսկողություն LAN-ի միջոցով / Easy Remote Monitoring and Control Over LAN;
- Համատեղելի /Compatible with - Crestron Connected™, AMX DD and PJLink;
- Արագ միացում և արագ անջատում / Quick Start and Quick Off;
- **Պայծառություն** / Brightness - **6,000** ANSI Lumens;
- **Կետայնություն** / Resolution: **իսկական** (ֆիզիկական) /Native **WUXGA** (1,920 x 1,200 pixels) **/ արհեստական** (ինտերպոլացված) / compressed **4K** (4,096 x 2,160 pixels);
- **Կողմերի հարաբերակցությունը** (իսկական/օժանդակվող) / Aspect Ratio (Native / Supported) - 16:10 / 16:9 , 4:3;
- Լազերային լույսի աղբյուրի շահագործման ժամամկետը / Laser light source life - **20,000** hours;
- **Կոնտրաստ** / Contrast Ratio - 3,000,000:1;
- **Ուղղահայաց և հորիզոնական սեղանային շեղումների շտկում** / Keystone Correction – **V ±25 / H ±35;**
- **Պատկերի չափը** (անկյունագիծ) / Projection Size (diagonal) - **30" - 300";**
- **Ուղղահայաց և հորիզոնական օպտիկական առանցքի տեղաշարժ** (ոսպնյակի տեղաշարժ) / Optical axis shift (lens shift): **V +44%, H ±20%;**
- Նետման հարաբերակցություն / Throw ratio – 1.09-1.77:1;

**Մուտքային տերմինալներ** / Input terminals: Video: **2 x HDMI** 19-pin (HDCP 2.2 and Deep color compatible); 1 x **D-Sub 15 pin** (RGB/YPBPR/YCBCR); 1 x **Pin jack** (Video); Audio: 2 x **M3 stereo mini-jack**; 1 x **Pin jack** (L-R);

**Ելքային տերմինալներ** / Output terminals:**1 x D-Sub 15 pin** (RGB/YPBPR/YCBCR) - ***input/output switching***; 1 x **M3 stereo mini-jack** – variable audio out;

**Հաղորդակցման տերմինալներ** / Communication terminals: 1 x **RJ-45** for network control (10/100Base-TX, compliant with PJLink™(Class 2); 1 x **RJ-45** x **1** for network and DIGITAL LINK connection ( HDBase-T™ compliant, 100Base-TX, compatible with PJLink™ (Class 2), HDCP, Deep Color, 4K/30p signal input), 1 x **USB** type-**A** (for Memory Viewer

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | function, optional Wireless Module AJ-WM50, power supply (DC 5 V, maximum 2A); 1 x **D-sub 9 pin** (RS-232C compliant, for computer control);<br>- Ներկառուցված բարձրախոս / Built-in Speaker - **10 W**;<br>- Քաշը / Weight - 7.2 kg<br>- **Երաշխիքային սպասարկման ժամկետը / Warranty:**<br>- Թվային պրոյեկտորի համար՝ **3 տարի** / For parts and labor - **3 years;**<br>- Լազերային լույսի աղբյուրի համար՝ **3 տարի** կամ **20 հազար ժամ** կախված այն բանից, թե որ իրադարձությունը տեղի կունենա առաջինը; / Laser light Source - **3 years** or **20K hours**, whichever comes first.<br>**Երաշխիքային սպասարկում** հենց **ՀՀ տարածքում՝** արտադրողի **Panasonic Corp.** (Ճապոնիա) ընկերության (Professional Display Solutions) Հայաստանում **միակ պաշտոնական դիստրիբյուտոր** և **իրավազոր սերվիս կենտրոնում** («Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ): | | | | | | | |
| 2 | 38651200/4 | **Պրոֆեսի-ոնալ թվային լազերային պրոյեկտոր NEC PE455WL** | **NEC,** ***NEC Display Solutions LTD*** *(Ճապո-նիա)* | **Պրոֆեսիոնալ թվային լազերային պրոյեկտոր NEC PE455WL /** Professional Digital Laser Projector **NEC PE455WL**:<br>- Պատկերի արտացոլման հեղուկ-բյուրեղային տեխնոլոգիա / **3LCD** Technology;<br>- Լույսի **լազերային** աղբյուր / **Laser Light** source;<br>*Հատուկ հնարավորություններ / Special Features:*<br>**- Ամբողջովին մեկուսացված օպտիկական լազերային հեղուկ-բյուրեղային** հանգույց **/ Completely Sealed Optical Laser LCD** Engine;<br>**- Առանց ֆիլտրի** կառուցվածք / **Filter Free** design;<br>- **Հաստատուն պայծառության ռեժիմ / Constant Brightness Mode;**<br>- **Լույսի աղբյուրի** կարգավորում / **Light Source** Adjustment;<br>- Պատկերի ազատ թեքում / Free Tilt;<br>- Դիմանկարյային աշխատանքի ռեժիմ / Portrait Setting;<br>- **MultiPresenter** ֆունկցիա – անլար շնորհանդեսների անցկացում և միաժամանակ մինչև 16 սարքերի էկրանների բաշխում / **MultiPresenter Function** - enables wireless presentation and screen sharing for up to 16 devices simultaneously;<br>- **USB Viewer՝** առանց համակարգչի շնորհանդես անցկացնելու համար՝ թույլ է տալիս ֆայլերի տեսադիտում անմիջապես USB կրիչից / **USB Viewer** - allows files to be displayed directly from a USB stick;<br>- **DICOM** Simulation - սահմանում է ստանդարտացված արտացոլման չափորոշիչ մոխրագույն պատկերների համար հիմնված կոնտրաստի նկատմամբ մարդու աչքի զգայունության վրա / **DICOM** Simulation - defines a standardized display function for gray scale images based on human sensitivity to contrast.<br>- **NaViSet Administrator 2** հատուկ ծրագրային ապահովում բազմաքանակ պրոյեկտորների ղեկավարման | հատ | 1,195,200.00 | 2,390,400.00 | 2 | ՀՀ, ք.Երևան, Ծիծեռ-նակա-բերդի խճուղի 8/8 | 2 | Պայմա-նագիրը ուժի մեջ մտնելուց 45 օրվա ընթաց-քում |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | համար համակարգչային ցանցի միջոցով / **NaViSet Administrator 2** Software to manage all your connected display devices from a centralized location;<br>- Plug & Play Optional WLAN;<br>- **ID** set , **Control ID** Function & HTTP Browser Control;<br>- **Պատկերի կարգավորում** և **պատկերի անջատում** / **Picture Adjust** & **Picture Mute**;<br>- **Շնորհանդես** և **մկնիկի հսկում** / **Presentation** and **Mouse Control**;<br>- **խոշորացում** և **պատկերի սառեցում** ֆունկցիաներ / **Magnify** and **Freeze** functions;<br>- **Վիրտուալ հեռակառավարում՝** պրոյեկտորի բազմաթիվ կարգավորիչները կառավարվում են ոչ միայն հեռակառավարման վահանակով, այլ նաև VGA մալուխի միջոցով միացված համակարգչից / **Virtual Remote** for *direct PC control* - the various projector settings can be managed not only using the remote control unit, but also from a PC connected to it via the VGA cable;<br>- Արագ ստարտ, Ավտոմատ սնուցման միացում և անջատում, Ուղղակի անջատում և Անջատման ժամանակաչափ / Quick Start, Auto Power ON/OFF, Direct Power-Off Function & Off-Timer;<br>- Օգտագործողի տարբերանշանի օպցիոնալ արտացոլում և տեստային նմուշ / Optional User Logo & Test Pattern;<br><br>- **Պայծառություն /Brightness- 4,500** ANSI Lumens ;<br>- **Կետայնություն / Resolution** - **Իսկական** (ֆիզիկական) / Native **WXGA** (1,280 x 800 pixels) / **օժանդակվող** (ինտերպոլացված) / compressed **4K/UHD** (3,840 x 2,160 pixels);<br>- Կողմերի հարաբերակցություն (իսկական/օժանդակվող) / Aspect Ratio (Native / Supported) - **16:10 / 16:9, 4:3**<br>- Լազերային լույսի աղբյուրի շահագործման ժամամկետը / Laser light source life - **20,000** hours;<br>- **Կոնտրաստ / Contrast**- 500,000:1;<br>- **Ձեռքով խոշորացում / Manual Zoom** - **1,6x**;<br>- **Ոսպնյակի տեղաշարժ / Lens shift** - H:±29, V:+60,-0;<br>- **Հորիզոնական** և **ուղղահայաց** սեղանային շեղումների ձեռքով շտկում / **Horizontal** and **Vertical** Manual Keystone Correction: H=±30°, V=±30°;<br>- **Նետման հարաբերակցություն / Throw ratio**: 1.23 – 2 : 1;<br>- Պրոյեկտվող պատկերի չափը (անկյունագիծ) / Projection Screen Size (diagonal) - 30" - 300" (0.76 - 7.62 m);<br>- Վիդեո համատեղելիություն / Video compatibility: NTSC 3.58; NTSC 4.43; PAL; PAL-M; PAL-N; PAL60; SECAM;<br>- **Մուտքային տերմինալներ / Input terminals**: Video: 1 x Mini D-sub 15 pin; 2 x HDMI™ supporting HDCP; Audio: 1 x 3.5 mm Stereo Mini Jack for Computer analog, 2 x HDMI audio;<br>- **Ելքային տերմինալներ / Output terminals**: 1 x 3.5 mm Stereo Mini Jack (variable); | | | | | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | - **Հաղորդակցման տերմինալներ / Communication terminals**: 1 x D-Sub 9 pin (RS-232); 1 x RJ45; Optional WLAN; 1 x Type B (for Service); 1x Type A (USB 2.0 high speed) with 2.0 A Power Supply;<br>- Բարձրախոսներ / Speakers - 1 x 20W (mono);<br>- 30 լեզուներով էկրանային մենյու և գաղտնաբառով անվտանգության համակարգ / **OSD** with 30 languages & Password Security System;<br>- Բազմալեզու (ներ. անգլերեն և ռուսերեն) մենյու/ձեռնարկներ / Multilanguage (incl. English and Russian) Menu / Manuals;<br>- Քաշը / Weight - 9,7 kg;<br>- **Երաշխիքային սպասարկման ժամկետը / Warranty:**<br>- Թվային պրոյեկտորի համար՝ **3 տարի** / For parts and labor - **3 years;**<br>- Լազերային լույսի աղբյուրի համար՝ **3 տարի** կամ **10 հազար ժամ** կախված այն բանից, թե որ իրադարձությունը եղի կունենա առաջինը; / Laser light Source - **3 years** or **10K hours**, whichever comes first.<br>**Երաշխիքային սպասարկում** հենց **ՀՀ տարածքում՝** արտադրողի NEC Display Solutions LTD Հայաստանում **միակ պաշտոնական դիստրիբյուտոր** և **իրավազոր սերվիս կենտրոնում** («Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ): | | | | | | | |

Սարքավորումները **նոր են, չօգտագործված** և **գործարանային փաթեթավորմամբ**:

**Ապրանքի տեղադրումը, միացումը, փորձարկումը**, ինչպես նաև **Պատվիրատուի անձնակազմի ուսուցումն** Վաճառողի՝ որպես **Panasonic Corp.** (Ճապոնիա) և **NEC Display Solutions LTD** ( Ճապոնիա ) ընկերությունների Հայաստանում միակ **լիազորված պաշտոնական դիստրիբյուտոր** և **սպասարկման** (սերվիս) **կենտրոն** կազմակերպության կողմից իրականացվում է **պայմանագրի գնի շրջանակներում**:

ԳՆՈՐԴ
«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ»
հիմնադրամ
ՀՀ, ք.Երևան, Ծիծեռնակաբերդի խճ. 8/8
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ ՝ 1510033175435000
ՀՎՀՀ՝ 00007386

Տնօրեն՝ Հ. Մարությունյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան 0025, Խանջյան փող.50
«Թեքեյան բիզնես կենտրոն»
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570005003790100
ՀՎՀՀ 01204713

Գլխավոր տնօրեն՝ Ռ. Ցայլյան

/ստորագրություն/
Կ.Տ

*09 դեկտեմբերի 2020 թ. կն*
*«ՀՑԹԻ-ԳՀԱՊՁԲ-20/20» պայմանագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 38651200/2 | Պրոֆեսիոնալ թվային-լազերային պրոյեկտոր | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 3,870,000.00 | 3,870,000.00 |
| 2 | 38651200/4 | Պրոֆեսիոնալ թվային-լազերային պրոյեկտոր | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 2,390,400.00 | 2,390,400.00 |

ԳՆՈՐԴ
«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ»
հիմնադրամ
ՀՀ, ք.Երևան, Ծիծեռնակաբերդի խճ. 8/8
Արարատբանկ ԲԲԸ
Հ/Հ՝ 1510033175435000
ՀՎՀՀ՝ 00007386

Տնօրեն՝ Հ. Սարգսյան

/ստորագրություն/
L.S.

ՎԱՃԱՌՈՂ
«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան 0025, Խանջյան փող.50
«Թեքեյան բիզնես կենտրոն»
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570005003790100
ՀՎՀՀ 01204713

Գլխավոր տնօրեն՝ Ռ. Եսայան

/ստորագրություն/
L.S.